ՏԱՂ ՓՈԽՄԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

—

Լոյս անապական Մարիամ՛ սուրբ Աստուածածին,
Միայն օրհնեալդ ի կանայս սրբէ հողեղէն և քրովբէ վեհագոյն.
Ողջո՜յն ողջունարիր աւետեաց գաբրիէլեան ձայնիւն,
Ուրախ լեր բերկրեալ Տիրամայր և նոյն Տիրուհի.
Սուրբ սերովբէից քանդակք երկնաճեմ, Միածնին իջեվան
Անանջրպետ հրանիւթից հոգեղինաց զուարթնոց
Տնօրինեալ 'ի քեզ պատճառ փրկութեան.
Տաճար և առագաստ Բանին Հօր
Դու գուստր նոր Սիոնի, ցընծա դշխոյ զուարճացեալ.
Զաքարիայն աւետեօք հարսըն պանծալի փեսային Քրիստոսի.
Անթառամ՛ ծաղիկ շուշան վայրի փունջ խունկերամ՛ գարնայնոյ,
Կանաչարդյս սաղարթեալ բողբոջախիտ
Վարդաթուփ ծաղիկ ծիրանի և բազմագունակ.
Նարդ նարդինահոտ ճեմարան թագաւորին,
Արքայից արքային բուրաստան ցանկալի.
Դրախտ փափկութեան պտղաբեր խընձոր կարմիր գոյն ոսկի,
Ճիշդ ի Լիբանանէ տունկդ արմաւենի և ծառ ձիթենի.
Դուռըն փակեալ ըզքեզ եսես Եզեկիէլ մարգարէն.
Սողոմոն օրինակէր ըզխորանն գըմբէթաձև հրաշալի.
Ճախարակեալ աշտանակ, խորհուրդ եկեղեցւոյ,
Դու աշտանակ լուսեղէն, ի քեզ կաթեցաւ շողն աստուածեղէն,
Նոյն սափոր ոսկի լի մանանայիւ.
Յ Սինա 'ի լերինն ամպ հովանի հոգեղէն.
Զայն հայրական 'ի վերուստ ընդ Մովսէսի անդ խօսէր,
Եւ մորենին բոցբոցէր.
Աստուածային ճառագայթ անկէզ մնալով զքեզ օրինակէր.
Ամպ թեթև յԵգիպտոս ընթացեալ մանկամբն Էմմանուէլիւ.
Նոյն և ամպ լուսեղէն ցօղովն աղբիւրացեալ,
Քաղցրաճաշակ կարկաջմամբ ծիծաղ ծաւալ վտակեալ՝
Ծով ծիրանափայլ և ծիլնանման.
Նոյն նոյեան տապան, տախտակ տառիցն օրինաց իսրայէլեան բանակին,
Աբրահամու տաղաւար, նոյն և Դաւթի կտակարան.
Թուղթ մատեանեաւըն կընքեալ Եսայեաս գուշակեաց,
Անլուծանելի գրով հաստատեաց.
Ո՛վ քաղաք պանծալի բարձր աշտարակ սիւն ամպոյ,
Պատուար ամուր երկաթի, խարիսխ պըղընձի,
Սիւն ոսկի քարամբք պըճնեալ արծաթեան,
Եւ հրահոսեալ պաղպաջմամբ դու հընձան լուսափայլ,
Բուրուառ ոսկեղէն 'ի քեզ կաթեցաւ շողն աստուածեղէն.
Սրաթև արագընթաց աղաւնի, չքնաղացեալ սիրամարգ
Եթերընթաց գընացիւք սաւառնացար 'ի յերկինս
Ցեւթնաստեղեան 'ի խորանս յանպատում 'ի կեանսն միշտ փառաւորեալ.
Յերկինս 'ի վեր հարսն Երրորդութեանն,
Արժանի եղեր ամենասուրբ Տիրուհի, մեզ բարեխօս լեցիս Տիրամայր.

digitised by A.R.A.R.@